ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, այսուհետ Գրասենյակ, ի դեմս տնօրեն Ս.Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կողբի ամբուլատորիան» այսուհետ՝ «ամբուլատորիա», ի դեմս տնօրեն Ս. Հարությունյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Գրասենյակը պարտավորվում է Ամբուլատորիային հանձնել թիվ 2979ԱՄ վարկային պայմանագրի շրջանակներում ձեռք բերված բուժ. օգնության մեքենան, իսկ Ամբուլատորիան պարտավորվում է բուժ օգնության մեքենան օգտագործել բացառապես սույն պայմանագրով նախատեսված նպատակների համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Գրասենյակը պարտավորվում է.

2.1.1 սույն պայմանագրի ստորագրման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Ամբուլատորիային հանձնել պայմանագրի 1.1 կետում նշված բուժ. օգնության մեքենան,

2.1.2 բուժ. օգնության մեքենան հանձնելու հետ մեկտեղ Ամբուլատորիային հանձնել նրա պատկանելիքները, որոնք նշված են բուժ օգնության մեքենաների ձեռք բերման պայմանագրում,

2.1.3 բուժ. օգնության մեքենան հանձնել բուժ. օգնության մեքենայի ձեռք բերման պայմանագրում նշված կոմպլեկտայնությամբ,

2.2Ամբուլատորիան պարտավորվում է.

2.2.1 ձևակերպել սույն պայմանագրի շրջանակներում ձեռք բերված բուժ. օգնության մեքենան Ամբուլատորիայի համապատասխան հաշվեկշռային հաշիվներում,

2.2.2 սույն պայմանագրի շրջանակներում ձեռք բերված բուժ. օգնության մեքենան օգտագործել բացառապես Առողջության առաջնային պահպանման ծրագրի նպատակների համար,

2.2.3 բուժ. օգնության մեքենան օգտագործել իր տարածքի ազգաբնակչությանը առաջնային բժշկական օգնության ծառայություններ մատուցելու համար,

2.2.4 իր հաշվին իրականացնել բուժ. օգնության մեքենայի ընթացիկ և հիմնական վերանորոգումը, ապահովել մեքենայի սարքինությունը և անվտանգությունը,

2.2.5 ապահովել բուժ. օգնության մեքենայի անվտանգ շահագործումը,

2.2.6 Գրասենյակի պահանջով և պարբերականությամբ նրան ներկայացնել հաշվետվություն՝ բուժ. օգնության մեքենայի տեխնիկական վիճակի, ինչպես նաև բուժ. օգնության մեքենայի օգտագործման վերաբերյալ:

2.3Ամբուլատորիան իրավունք չունի առանց Գրասենյակի գրավոր համաձայնության սույն պայմանագրի շրջանակներում ստացված բուժ. օգնության մեքենան հանձնել այլ կազմակերպության՝ այդ թվում իր վերադասին կամ հիմնադրին, ինչպես նաև իրավունք չունի այլ կազմակերպության հանձնել մեքենայում տեղադրված սարքավորումները:

3 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ամբուլատորիայի կողմից սույն պայմանագրի պայմանների խախտման, բուժ. օգնության մեքենայի ոչ նպատակային օգտագործման, բուժ. օգնության մեքենայի հիմնական և ընթացիկ վերանորոգումը չկատարելու դեպքում Գրասենյակն իրեն իրավունք է վերապահում հետ պահանջել ավտոմեքենան, ինչպես նաև պահանջել հատուցելու պատճառված վնասները:

4 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Պայմանագիրը կնքված է հավասար իրավական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

4.2 Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր են այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր :

4.3 Բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող են ծագել Պայմանագրի գործողության ընթացքում, կլուծվեն բանակցությունների միջոցով:

4.4 Եթե վեճերը բանակցությունների միջոցով չեն լուծվում, ապա դրանք պետք է լուծվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Կողմերի հաշվարկային հաշիվները եւ հասցեները:

Գրասենյակ. «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
375001 Երեւան, Թումանյան փ. 8, հեռ 564 156
հ/հ 187007021004 «Կրեդիտ-Երևան» ԲԱ բանկում
ՀՎՀՀ 02551144

Ամբուլատորիա. «Կողբի ամբուլատորիա» ՊՓԲԸ, Հասցեն. Տավուշի մարզ, գ. Կողբ
հ/հ 142320016967 Հայագրոբանկի Նոյեմբերյանի մասնաճյուղ
ՀՎՀՀ 07401674

ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ս.Խաչատրյան

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ

Ս.Հարությունյան